## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# Ս. ԳՅՈՒՏ Ա ԱՐԱՀԵԶԱՑԻ (461-478)

*Սկիզբը՝ թիվ 7*

Գյուտ կաթողիկոսը 462 կամ 463 թվին դիմավորեց նախարարներին, որոնք պարսից արքայից արքայի հրամանով վերահաստատվեցին իրենց տիրույթներում՝ վերստանալով տանուտիրության իրավունքը: Պատմիչների հաղորդումների համաձայն՝ չնայած հալածանքներին եւ կրած զրկանքներին՝ գերեվարված 37 իշխաններն էլ կենդանի էին մնացել: Փարպեցու հավաստմամբ՝ նրանք մահացան բնական մահով եւ թաղվեցին տոհմական դամբարաններում: Գյուտ Ա Արահեզացին, որին պատմիչը բնութագրում է որպես «այր լի գիտութեամբ հայոցս եւ առաւելեալ յունիւն, յորդասաց բանիւ եւ առատաբուղք վարդապետութեամբ», Վաղարշապատի կաթողիկեում, հրճվալից բազմության ներկայությամբ, հոգեշունչ քարոզներով նրանց դիմավորեց՝ հիշելով Վարդանի եւ Վարդանանց նահատակությունը, քահանաների վկայությունը եւ Աստծու զորությամբ՝ վերադարձը գերեվարված նախարարների, որոնք ստացան նրա օրհնությունը: Երկրում աստիճանաբար սկսեց վերհառնել ազգային ոգին: Հայրենասեր ուժերը՝ ի դեմս կաթողիկոսի, ձեռք բերեցին թե՛ գաղափարական առաջնորդի եւ թե՛ իրենց գործունեության հովանավորի ու պաշտպանի:

Շուրջ մեկ տասնամյակ շարունակվեց Գյուտի, ընդհանուր առմամբ, կանոնավոր պաշտոնավարությունը: Կաթողիկոսը ձեռնամուխ եղավ եկեղեցական բարենորոգությունների վերահաստատմանը, կանոնական ու ծիսական արարողությունների կարգավորմանը: Չնայած այն իրողությանը, որ ծիսական մատյաններում Գյուտին վերագրվող հատուկ մասեր չկան, այնուամենայնիվ, նրա հովվապետական հսկողության մասին է վկայում Դավիթ Անհաղթին ուղղված ոչ ծավալուն նամակը: Երբ Անտիոքից եւ Ավլին գյուղից Կոստանդին, Պետրոս եւ Թեոդորոս անունով երեք աղանդավոր նեստորական գալիս են Հայաստան եւ սկսում քարոզել, կաթողիկոսը նրանց քարոզչությունն արգելակելու համար դիմում է Դավիթ Ներգինացուն, որ նա գաղափարական առումով պաշտպանի ուղղափառությունը: Մ. Օրմանյանի կարծիքով՝ կաթողիկոսը հիշյալ նամակը գրել է իր պաշտոնավարության առաջին տասնամյակում եւ ոչ թե հաջորդ շրջանում, երբ նա, պաշտոնից հեռանալով, հաստատվել էր Ոթմուս գյուղում:

Գյուտ կաթողիկոսի հրամանով՝ ամենուր Վարդանանց պատերազմի զոհերի հիշատակին եկեղեցիներ էին կառուցում եւ հուշարձաններ կանգնեցնում: Դրանցից մեկի մասին հիանալի տեղեկություններ է պահպանել Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը: Ավարայրի ճակատամարտից հետո արցախահայերի մի զորաջոկատ, Մարտիրե անունով մի հրամանատարի ղեկավարությամբ, Վայոց ձորի վրայով փորձում է նահանջել Արցախ՝ ձգտելով խուսափել պարսից զորահրամանատար Աթաշխուդայի զորաբանակի հետապնդումից: Արցախահայերը, ծանր կռիվներ մղելով Եղեգյաց եւ Մոզան գետերի ջրկիցի՝ հետագայում Անգեղձոր կոչված նեղ ձորակի, Ոստինք եւ Արտաբույնք գյուղերի գետակների ջրկիցի եւ Ցաղացքար ուխտի շրջանում, ի վերջո պարտվում են պարսկական զորաբանակից եւ ոչնչացվում: Ծանր կորուստներ են կրում նրանց օգնության եկած Ոստինքի եւ Արտաբույնքի սեպուհները եւ ընտիր զորականները, իսկ արցախահայերի առաջնորդ Մարտիրեն Անգեղձորի կռվում ընկնում է հերոսի մահով: Ձախից դեպի Ցաղացքարի ուխտին նայող ձորադռան շրջանում, որտեղ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը եւ որը կոչվեց Մարանդ, ավելի ուշ մասուռ կառուցվեց, իսկ Ոստինք եւ Արտաբույնք գյուղերի ջրկիցի հատվածում տեղի բնակիչները եկեղեցի կառուցեցին: Իմանալով այն մասին, որ Մարանդի ճակատամարտի մասնակից մի պարսիկ, որ զորքի գուշակն էր, ինչ-ինչ հրաշքից ազդվելով՝ դարձել էր քրիստոնյա, որի գերեզմանի վրա հետագայում մասուռ էին կառուցել, Գյուտ կաթողիկոսն իր հովվապետության իններորդ տարում կարգադրում է ճակատամարտի վայրում վկայարան կառուցել եւ այնտեղ թաղել զոհվածների ոսկորները: Հրեւը, Շահիրեսը, Արշեն երեցը եւ Աբդիուն կառուցում են վկայարանը՝ երկնանման հրաշակերտ մի շինություն՝ երկգմբեթ եւ եռախորան: Մոզն կամ Մոզան գետից մինչեւ Սրկղոնք կոչվող լեռնակողմը տրվում է եկեղեցուն՝ որպես նրա պաշտոնյաների ժառանգություն: Եկեղեցու շինարարությունն ավարտելուց հետո գալիս են Գյուտ կաթողիկոսն ու Սյունյաց Անանիա եպիսկոպոսը, որոնք բազմամբոխ ժողովրդով նշում են եկեղեցու նավակատիքը եւ հողին հանձնում սրբերի, այսինքն՝ հայրենիքի համար զոհվածների ոսկորները: Հետագայում, երբ այն ավերվել էր, այդ վայրում հիմնվեց Խոտորալեզ կամ Մխտորալեզ գյուղը: Ղ. Ալիշանը հիշյալ բնակավայրը նույնացրել է Բաշքենդ (այժմ՝ Վերնաշեն) գյուղի հետ: Գյուտ կաթողիկոսի կատարածը որոշակի նպատակներ էր հետապնդում: Նա, վառ պահելով Վարդանանց պատերազմի զոհերի հիշատակը, ոչ միայն փառաբանում էր ազգային հերոսներին, այլեւ նոր սերնդին դաստիարակում հայրենասիրության ոգով:



Մինչ Գյուտ կաթողիկոսը բուռն գործունեություն էր իրականացնում Հայոց եկեղեցու դիրքերն ամրապնդելու, ժողովրդի ոգին բարձրացնելու եւ վերջինիս հայրենասիրական շունչ հաղորդելու ուղղությամբ, երկրի կացությունն սկսեց բարդանալ՝ պարսից արքունիքի խարդավանիչ քաղաքականության հետեւանքով: Չկարողանալով հասնել իր նպատակին կռվի դաշտում եւ բռնությամբ՝ պարսից արքունիքն սկսեց խրախուսել հավատուրացությունը՝ պաշտոններ բաժանելու եւ տիրույթներ շնորհելու միջոցով: Պարսից արքունիքին դուր գալու համար գտնվեցին նախարարներ, որ դեռ արտոնությունները չստացած՝ ընդունում էին զրադաշտականությունը՝ չնայած իրենց հոգեւոր էությամբ զրադաշտական չէին դառնում: Շատերը, ուրացությամբ ձեռք բերելով տոհմի նահապետությունն ու տանուտիրությունը, վախենում էին որեւէ ինքնուրույն քայլ կատարելուց՝ չվնասելու համար իրենց դիրքերը: Նշանակալից թվով նախարարներ էլ տեսնելով, թե ինչպիսի պատիվների էին արժանանում ուրացողները, պաշտոնից չզրկվելու կամ էլ պաշտոն ձեռք բերելու համար հետեւում էին ուրացողների դասին: Ավելորդ է ասել, որ ուրացողները, կորցնելով իրենց նկատմամբ ժողովրդի հարգանքը, առանձին համարում չունեին նաեւ պարսից արքունիքի աչքում: Նրանց օգտագործում էին, սակայն չէին հարգում, եւ ինչպես Ղազար Փարպեցին է հավաստում, Պերոզի կարծիքով՝ իր հպատակներից «այր՝ անպիտան եւ գունդ յետին Ասորին է, բայց քան զԱսորի՝ Հայն է այր յետին եւ անպիտան»: Հասկանալի է, որ այդ գաղջ միջավայրում քսությունն ու ստորությունը, մարդկային ամենազզվելի բարքերը ծաղկում էին: Ուրացողներն իրենց համարումը պարսից արքայից արքայի աչքում բարձրացնելու համար հայրենասեր նախարարներին տեղի-անտեղի մեղադրում էին անհավատարմության, դավաճանության եւ հունական կամ բյուզանդական կողմնորոշման մեջ:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՄՈՒԼԸ

***Այս տարի լրանում է Խրիմյան Հայրիկի ծննդյան 182 եւ մահվան 95-րդ տարեդարձը, թող այս համեստ հոդվածը հանդիսանա նրա հիշատակի հանդեպ մեր հարգանքի արտահայտությունը:***



Հանրահայտ է, եւ ոչ մեկին այսօր չես զարմացնի պատկերազարդ բազմաբնույթ պարբերականներով, որոնք խոշոր առավելություն ունեն ընթերցողների մոտ մյուս պարբերականների համեմատությամբ: Դրանք առավել մատչելի են, ուսուցանող եւ բավականություն են պատճառում ընթերցողին, օգնում նրան նրբացնելու, զարգացնելու ճաշակը եւ ձգտելու դեպի գեղեցիկն ու գիտելիքը:

Պատկերազարդ թերթի նշանակությունն ավելի արդիական դարձավ քրիստոնեության գիտելիքների պարզաբանման, տարածման խնդրում: Ահա հինգ տարի է՝ սկսած 1997 թվականից, ինչ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը լույս է արձակում «Քրիստոնյա Հայաստան» կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթը: Այն իր պատկերազարդ ձեւավորումով եւ բովանդակությամբ խոշոր նպաստ է բերում հավատացյալ ընթերցողներին, օգնում նրանց իմանալու հայ ազգային ու հոգեւոր-կրոնական խորհուրդները, ազգի՝ քրիստոնեության հավատքին անցնելու կարեւորությունը, նրա պատմական նշանակությունը:

Անդրադառնալով անցյալին՝ ասենք, որ մինչեւ 19-րդ դարի 90-ական թվականները հայերեն հրատարակվող մամուլի էջերը հիմնականում առանց լուսանկարների էին եւ ոչ պատկերազարդ:

Եվ ահա 1890 թվականի հունվարից Թիֆլիսում հրատարակվող «Արձագանք» գրական եւ քաղաքական շաբաթաթերթը լույս է տեսնում պատկերազարդ, որը մեծ ուշադրության է արժանանում:

Ինչպես հայտնի է, այդ տարիներից ամբողջ հայության շրջանում, եւ ոչ միայն հայության, խոշոր հեղինակություն է վայելում ազգի ազնիվ զավակ Խրիմյան Հայրիկը:

1890 թվականի ապրիլի 4-ին լրանում էր այդ մեծահամբավ հոգեւորականի ծննդյան 70-ամյակը, իսկ նա գտնվում էր Երուսաղեմ քաղաքում, որտեղ աքսորված էր թուրքական իշխանության կողմից: Հակառակ իր աքսորական վիճակին՝ նրա հետ միշտ կապի մեջ էին ազգի նվիրյալներից շատերը: Այստեղ էլ նա հաճախակի ստանում ու կարդում էր «Արձագանքը»: Թերթի խմբագիրը, ծանոթ լինելով Հայրիկի հայրենասիրական գործերին եւ դեպի թերթը ունեցած նրա վերաբերմունքին, ամեն անգամ առաքում էր նրան «Արձագանքի» օրինակները: Եվ ահա Հայրիկը, ստանալով հերթական համարը, այնտեղ ընթերցում է խմբագրության շնորհավորանքներն իր ծննդյան 70-ամյակի առթիվ: Այդպիսի ուշադրության համար իր պատասխան նամակով գրում է.


ԱՐՁԱԳԱՆՔ
№ 8

*«Մեծարոյ խմբագիր «Արձագանք» պատկերազարդ շաբաթաթերթի:*

*Յիշելով զՀայրիկ եւ նրա եօթանասունամեակի շրջանը՝ կը շնորհաւորէք նրա ծերութեան հասակը: Աւաղ ես այդ հաշիւը մոռացած էի, զի մեր կեանքը հաշիւ չունի, եւ ոչ ոք մեր աշխարհէն ինձ յիշեցուց, եւ միթէ չը գիտէք, թէ մեր աշխարհի մէջ կեանքի հաշիւը չը կայ:*

*Թոյլ տուր, որ ես էլ նոր փառաւոր ձեռնարկութիւնդ շնորհաւորեմ: Ուրախ եմ եւ շատ ուրախ պատկերազարդ «Արձագանք» թերթիդ նորափայլ հրատարակութեան, որ մինչեւ ութերորդ թերթ մեզ հասաւ:*

*Գիտէ՞ք ես շատ սիրահար եմ պատկերներու, մանաւանդ երբ այդ պատկերներ Աստուածաշունչ գրոց եւ Աւետարանի հրաշալեաց վերաբերին: Եւ դուք իմաստուն խորհրդով երկնային մասն երկրին հետ կը խառնէք, որպէս զի ժողովուրդ ոչ միայն գեղարուեստով սքանչանայ, այլեւ հոգին սուրբ կրակով վառի: Ոչ միայն ինձ, այլեւ համայն ազգին ո՞ր չափ սիրելի են մեր հայրենեաց վանքերու հոյակապ տաճարած պատկերներ, ինչպէս ՀԱՂԱՐԾՆԻ վանուց պատկերը:*

*Իսկ ես կօրհնեմ զձեզ եւ ձեր այդ ձեռնարկութիւն, որ տակաւ-տակաւ աճի եւ զարգանայ եւ նոր ոգի ներշնչէ մեր ազգին:*

*Վասն ձեր աղոթարար*
*25 ապրիլի»:*

Հայրիկի գնահատականը եւ կարծիքը մեծ նշանակություն ունեցան խմբագրի դիրքորոշման համար. թերթի պատկերազարդումը շարունակվեց եւ լայն տարածում ստացավ նաեւ մյուս հայ պարբերականների կողմից:

*Հենրիկ ԽԱՌԱՏՅԱՆ*

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

# Պայքար Հայոց պետության պահպանման համար. ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» առանցքում դրել է հերոսականությունը եւ հավատքային անաղարտությունը եւ կարեւորելով Հայկազունիների ազգաբանությունը՝ նշել. «Բաց թողնելով դեպքերից ոչ կարեւորները՝ ասենք ինչ որ անհրաժեշտ է»: Պատմահայրն օտար բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը Հայկ նահապետի՝ Բելի դեմ մղած հաղթական պատերազմից (Ք. ծ. ա. III հազարամյակ) հետո նկարագրել է Ասորեստանի հին (Ք. ծ. ա. XX-XVI դդ.), միջին (Ք. ծ. ա. XV-XI դդ.) եւ նոր (Ք. ծ. ա. X-VII դդ.) թագավորությունների ժամանակագրությանը զուգահեռ:

Հին Ասորեստանի թագավորության գահակալ Նինոսը ճանաչեց հայկյան Արամի թագավորությունը: Արամը, ավարտելով իր կռիվներն արեւելցիների հետ, Ասորեստանում գտավ, հալածեց եւ սպանեց իր երկիրն ապականող Բարշամին՝ հսկաների ցեղից: Ասորեստանի դաշտերի մեծ մասն Արամը հարկատու դարձրեց եւ հանձնեց Հայկազունի Կադմոսի տան տնօրինությանը:

Հայ ժողովուրդը պայքարն արեւմուտքից եւ հարավից հարձակվող օտար բռնակալությունների դեմ շարունակեց նաեւ Հայասա-Հայքի եւ Նաիրյան թագավորությունների ժամանակ (Ք. ծ. ա. II հազարամյակ), որոնք ներկայացնում էին Հայոց պետականության հնագույն հիմքի՝ Արատտայի եւ Արմանումի (Ք. ծ. ա. III հազարամյակ) վրա բարձրացած Արարատյան թագավորությունների միջին փուլը:

Միջինասորեստանյան դարաշրջանի թագավոր Տեւտամոսի օրոք Հայոց զորավար Հայկազունի Զարմայրը մասնակցեց Իլիական պատերազմին՝ օգնելով Տրոյայի վերջին թագավոր Պրիամոսին:

Նորասորեստանյան թագավորության սկզբնական ժամանակաշրջանը համընկավ Հայաստանում Արարատյան-Վանի թագավորության ժամանակաշրջանին, որի կենտրոնը Վանա լճի շրջակա ավազանում գտնվող Բիաինելե-Վանն էր: Լճի հյուսիսային ափին գտնվող Արճեշ քաղաքը դարձավ Հայոց Արամե արքայի պետության մայրաքաղաքը: Արամ-Արամե անունը դարեր առաջ ապրած Հայկազունի Հարմայի որդու՝ Արամի եւ Արամե Արճեշեցու գործունեության միահյուսմամբ պահպանվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Հայկազունի Արամի կերպարի մեջ:

Արամեից հետո իշխանությունն անցավ Հայաստանի հարավային շրջանների կառավարողներին, որոնց կենտրոնը դարձավ Վան-Տոսպ քաղաքը: Հայկազունիների գլխավոր ճյուղը մնաց Այրարատում եւ Աղձնիքի ու Սասունի բարձրադիր լեռնային շրջաններում՝ Հայոց պետության մեջ առաջատար տեղը ժամանակավորապես զիջելով իրենից ճյուղավորված հայ իշխանական տոհմերից մեկի՝ Վասպուրականի Արծրունիների տոհմի նախնիներին, որոնք Վանի՝ բիաինական արքայատոհմի հիմքը դրեցին, որի ժառանգորդները, իրենց գերակայությունը հաստատելիս, մրցակցության մեջ մտան Հայկազունիների արքայատոհմի գլխավոր ճյուղի հետ:



Արամեին հաջորդած Սարդուր թագավորն իր թագավորության մայրաքաղաքը հռչակեց Վան-Տոսպ քաղաքը՝ իրեն կոչելով «մեծ արքա», «հզոր արքա», «Նաիրի երկրի արքա»: Վանա ժայռի շրջակայքում նա կառուցեց մայրաքաղաքի միջնաբերդը: Մովսես Խորենացին պահպանել է Վան քաղաք-բերդի բնական միջավայրի գեղատեսիլ նկարագրությունն արեւելյան կողմից, որտեղից երեւում է «ծովի ափին մի երկայնաձեւ բլուր, որ երկայնությամբ ձգվում էր դեպի արեւմուտք՝ հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ հարավային կողմից ուղղահայաց դեպի երկինք բարձրացած մի կանգուն ու անթեք քարաժայռ կար: Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտանման երկայնաձեւ հովիտ, որ լեռան արեւելյան կողմից իջնում էր ծովի ափը, ընդարձակ եւ գեղեցիկ ձորի ձեւով. նրա միջով հոսում էին լեռներից իջնող, ձորձորներից ու հովիտներից քամվող քաղցրահամ ջրեր, որոնք լեռների ստորոտների մոտ միավորվելով՝ ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում: Հովտաձեւ ձորակի մեջ ոչ սակավ շեներ կային՝ ջրերի աջ ու ձախ կողմերում զետեղված: Այս հաճելի բլուրից դեպի արեւելք կար մի փոքրագույն լեռ»:

Սարդուրի հաջորդների՝ Իշպուինիի եւ Մենուայի ժամանակ Վանի թագավորությունն ավելի հզորացավ: Այս ժամանակների հետ է (Ք. ծ. ա. IX դ. վերջին քառորդ) կապվում ասորեստանյան թագուհի Շամուրամաթի գահակալությունը, որն առասպելական Շամիրամի պատմական նախակերպարն է: Հայ ժողովրդի պայքարն Ասորեստանի նվաճումների դեմ արտացոլվել է Արա Գեղեցիկի՝ Շամիրամի դեմ մղված անզիջում պայքարին նվիրված Մովսես Խորենացու շարադրանքում: Արա Գեղեցիկի կերպարի մեջ միահյուսվել են հազարամյակների խորքից եկող Հայոց հնագույն լուսապաշտությունն անձնավորող եւ հետագայում արքայական իշխանությունը ներկայացնող թագավորների կերպարները:

Նորասորեստանյան թագավորության անկման նախանշանն էր Ասորեստանի թագավոր Սենեքերիմ-Սենաքերիբի դեմ բռնկված ապստամբությունը (Ք. ծ. ա. 681 թ.), որին մասնակցեցին նրա որդիները: Աստվածաշնչում գրված է, որ Ասորեստանի Սենեքերիմ թագավորի «որդիները՝ Ադրամելեքը եւ Սարասարը, սպանեցին նրան սրով ու փախան Արարադի երկիրը, եւ նրա փոխարեն թագավորեց որդին՝ Ասորդանը»: Ըստ Մովսես Խորենացու՝ «Սենեքերիմ թագավորի որդիները՝ Ադրամելեքն ու Սարասարը, նրան սպանելով փախան եկան մեզ մոտ», քանզի այդ ժամանակ Հայաստանում կառավարում էր Հայկազունի Սկայորդին: Արարադ-Արարատի երկիրը՝ Հայաստան, փախած արքայազն Սարասարին «մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ՝ մեր աշխարհի հարավարեւմտյան կողմում: Նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչվող լեռը»:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի հնագույն շերտերը, ներառելով այս դրվագները, իրենց արձագանքներն ունեն «Սասնա ծռեր» դյուցազներգության որոշ հերոսական կերպարներում, ինչպես նաեւ Սանասուն կամ Սասուն գավառի անվանումը կապվել է Սանասարի անվան հետ: Սեպագիր արձանագրություններում Արմե կոչվող Սասունում իշխում էր Հայկազունի Սկայորդին՝ Հայոց հսկա-դյուցազնի որդին, որն ապաստան տվեց փախստականներին: Ասորեստանի նոր թագավոր Ասարհադդոնը ներխուժեց Արմե եւ դաժան հաշվեհարդար տեսավ փախստականների հետ:

Նկարագրված պատմական դեպքերը, ըստ Մովսես Խորենացու, «եղան ասորեստանցիների թագավորության ժամանակ եւ Շամիրամից եւ կամ Նինոսից հետո», իսկ «մեր Պարույրը եղավ Սարդանապալի»՝ Ասորեստանի վերջին գահակալի ժամանակ (Ք. ծ. ա. VII դ. վերջին քառորդ):

Մարաստանը, ձգտելով գերիշխանության Ասորեստանի դեմ, դաշնակցեց Հայաստանի հետ, ուր Վանի արքայատոհմն իր տեղը զիջել էր կրկին հզորացող Հայկազունիների գլխավոր ճյուղին, որի առաջնորդն էր Սկայորդու որդի Պարույրը: Հայկազունի Պարույրը, որ քաջ նախարար էր եւ զորավար, Հայոց թագավորության գահին բարձրացավ: Հայկազունիների թագավորական այս սերունդը շարունակեց «Պարույրը, Սկայորդու որդին Հրաչյա»: Ըստ Մովսես Խորենացու՝ Պարույրը Հրաչյա էր կոչվում առավելապես պայծառ երես եւ բոցավառ աչքեր ունենալու համար: Պարույրի կերպարի նկարագիրը բխում է բուն Հայկազունիների՝ մեր բնիկ նախնի՝ գեղապատշաճ, թիկնավետ, քաջագանգուր, խայտակն եւ հաստաբազուկ Հայկի եւ նրա սերունդների բնութագրից:

Պարույրն օգնեց մարերի թագավոր Վարբակեսին՝ Ասորեստանի թագավորությունը Սարդանապալից վերցնելիս: Պարույրի մասին Խորենացին ասել է. «Մեր առաջին ի Վարբակայ մարէ պսակեալ»: Պարույրին Հայոց թագավոր ճանաչելը նշանակում էր Հայկազունի Հարմայի որդի Արամի գլխավորած թագավորությունից ավելի քան հազարամյակ անց Հայոց թագավորության՝ օտարների կողմից կրկին ճանաչումը:

Շարունակությունը էջ 6

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# Ս. ԳՅՈՒՏ Ա ԱՐԱՀԵԶԱՑԻ (461-478)

Սկիզբը՝ էջ 4

Հատկապես բանսարկությունների էր ենթարկվում Վահան Մամիկոնյանը, որը Վարդան Մամիկոնյանի եղբոր՝ Հմայակի անդրանիկ որդին էր: Շնորհիվ իր անձնական հատկանիշների եւ օժտվածության՝ նա, որին Ղազար Փարպեցին անվանում է «այր մտացի, առողջախորհուրդ եւ բարեսեր», մեծ հեղինակություն ունենալով ուխտապահ նախարարների շրջանում, շարժում էր պարսիկների կասկածամտությունը: Վահանի բանսարկուների գլխավորը Գադիշո Խորխոռունին էր, որն աշխատում էր նրա հետ հաշվեհարդար տեսնել պարսից արքունիքի ձեռքերով: Հայտնվելով ծանր կացության մեջ՝ հայրենասեր նախարարներն էլ մտածում էին վիճակը շտկել օտարի օգնությամբ՝ դիմելով բյուզանդական աջակցությանը՝ ի դեմս կայսր Լեւոն Ա Թրակացու: Չնայած բազում դիմումներին ու խոստումներին՝ իրական օգնություն այդպես էլ չստացվեց: Բյուզանդիայի հրահրելու, բայց որպես կանոն՝ իր հնարավոր դաշնակիցներին չօգնելու քաղաքականությունը ոչ միայն թուլացնում էր ուխտապահների դիրքերը, այլեւ պարարտ հող էր ստեղծում քսու եւ ստոր ուժերի համար՝ բանսարկություններով զբաղվելու: Շատ նախարարներ, չուրանալու համար քրիստոնեությունը, թողնում էին ամեն ինչ եւ դառնում անապատականներ:



Ֆելիքս Եղիազարյան. «Հայ հոգեւոր հայրերը»

464 թվականին ավարտվեց Ստորմիզդ Արշականի մարզպանությունը, սակայն հայտնի չէ նա մահացա՞վ, թե՞ պաշտոնանկ արվեց: Ստորմիզդն իր պաշտոնավարության շրջանում իրեն դրսեւորեց որպես հմուտ եւ փորձառու պետական այր, որն իր մեղմ եւ ճկուն քաղաքականության շնորհիվ կարողացավ երկրում խաղաղությունը վերականգնել: Եթե նա, այնուամենայնիվ, պաշտոնանկ էր արվել եւ ոչ թե բնական մահով մահացել, ապա դա պարզորոշ վկայում է պարսից արքունիքի քաղաքականության կրած արմատական փոփոխության մասին, որովհետեւ Ստորմիզդի հաջորդ Ատրվշնասպ Յոզմանդյանը, անշուշտ արքունիքի թելադրանքով, որդեգրեց միանգամայն հակառակ քաղաքականություն: Պերոզը, լուր առնելով հայերի՝ հույների հետ ունեցած բանակցությունների մասին, սկսեց ավելի ականջ դնել քսու նախարարներին, եւ Գյուտ կաթողիկոսը կանչվեց Տիզբոն՝ բացատրությունների համար: 471 թվին նա, առանց դժվարություններ հարուցելու, ժամանեց Տիզբոն, որտեղ նրան հիանալի ընդունելություն ցույց տվեցին պարսիկ քրիստոնյաները՝ Տիզբոնի, Խուզիստանի եւ Հրեւի եպիսկոպոսի, այլ խոսքով՝ Պարսկաստանի պատրիարքի գլխավորությամբ: Գյուտ Ա Արահեզացին հրավիրվեց զորավար Աշտատի որդի Յազդվշնասպ Միհրանի մոտ՝ Գադիշո Խորխոռունու ամբաստանությունների կապակցությամբ բացատրություն տալու: Կաթողիկոսը բոլոր մեղադրանքներին էլ արժանի պատասխան տվեց: Նա հայտարարեց, որ ուրացողներին մտերիմ եւ բարեկամ լինել չի կարող, թեեւ կուզենա, որ նրանք դարձի գան: Ուստի հանուն դրա պատրաստ է անգամ զոհողությունների գնալ: Հույների հետ հարաբերություններ է պահպանում, քանի որ սովորել է Հոռոմց աշխարհում, այսինքն՝ Բյուզանդիայում, որտեղ ուսումնառության շրջանից հին ընկերներ ունի: Մյուս մեղադրանքը, թե ինչո՞ւ է սպասները բերում Հոռոմց երկրից, պարզ եւ հասկանալի բացատրություն գտավ. ինքը դրանք ստիպված է բերել հույների երկրից, որովհետեւ չի կարելի գտնել դրանք այլ վայրերում: Կաթողիկոսը համարձակ հերքեց իրեն անհավատարմության մեջ մեղադրանքը՝ ասելով, որ իր կրոնն իրեն հրամայում է հավատարիմ լինել, եւ ինքը վարվում է համաձայն իր կրոնի:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

